ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ՀԱԿՈԲ ՍԻՄԻՌՅԱՆԻՆ

Հասցե՝ ՀՀ ք. Երևան, 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ ԿՈԼՅԱ ՄԻՔԱԵԼՅԱՆ

Հասցե՝ ՀՀ Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Շահումյան 5

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ԽՈՇՈՐԱՅՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հասցե՝ ՀՀ Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Շահումյան 1

ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
Մուտքի թիվ 1287
«14» 07 2025թ.

Հարգելի պարոնայք.

2025թ. հուլիսի 7-ին Վայոց ձոր մարզի Եղեգնաձորի մշակույթի տանը տեղի ունեցավ առաջին հանրային լսում «ՄԵՏԱ ԳՈԼԴ» ՍՊ Ընկերության նախաձեռնությամբ, Եղեգնաձոր համայնքի տարածքում Ղազմայի՝ Գլաձորի բազմամետաղային հանքավայրի տարածքում իրականացնել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ուսումնասիրության աշխատանքներ:

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆ ԱՆՑԱՎ ՕՐԵՆՔԻ ԿՈՊԻՏ ԽԱԽՏՈՒՄՆԵՐՈՎ

«ՄԵՏԱ ԳՈԼԴ» ՍՊ Ընկերությունը ստեղծվել է 2025թ. մայիսի 23-ին, չունի հանքարդյունաբերության ոլորտում կենսագրություն, իրական շահառուն 100 տոկոս բաժնեմասով հանդիսանում է Մանվել Անդրանիկի Ղազարյանը, ով հանդիսանում է նաև <<ՎԵԴԻ ԱԼԿՈ>> Ընկերության սեփականատեր, որի կազմում է Վայոց ձոր մարզի Գետափի գինու գործարանը և ունի մեծ քանակությամբ խաղողի այգիներ մարզում, և թողարկում է Գետափի Վերնաշեն, Արենի գինիներ:

Հանրային լսումը բացեց «ՄԵՏԱ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի սեփականատեր Մանվել Ղազարյանը, նշեց որ ժամանակն է զարգացնել Վայոց ձորում մետաղական հանքարդյունաբերությունը, որը կստեղծի լրացուցիչ աշխատատեղեր և կբարձրացնի ժողովրդի բարեկեցությունը: Չպարզաբանեց և չվերլուծեց թե ինչպես կարելի է համատեղել Վայոց ձորում 30 տարի զարգացող այգեգործությունը, գինեգործությունը, անասնապահությունը, տուրիզմը, էկոլոգիապես մաքուր սննդի արտադրություն, որում այսօրվա պայմաններում զբաղված են մարզի քսանհինգ հազար բնակիչներ, բազմամետաղային հանքարդյունաբերության հետ, որոնք մեր կարծիքով անհամատեղելի են:

Հանքարդյունաբերության զարգացման դեպքում <<ՎԵԴԻ ԱԼԿՈ>> Ընկերության կարգախոսը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ <<Լավագույն ավանդույթները չեն շարունակվում>>:

Հանրային լսմանը մասնակցում էր նաև ազգային ժողովի պատգամավոր Սերգեյ Բագրատյանը, չկարողացանք ընբռնել մասնակցության նպատակը, որովհետև

չարտահայտեց որևէ կարծիք, այն մասին որ խորհրդային միության տարիներին Գլաձորի բազմամետաղային հանքավայրի շահագործման դեպքում Վայոց ձորի բնակչությունը ամբողջությամբ 30 կմ շառավղով պետք է տարհանվեր այլ բակավայրեր, հանքավայրում կապարի՝ որը բնության մեջ առաջանում է միայն ուրանի և թալիումի իզոտոպներից, կադմիումի, ցինկի մեծ քանակության պատճառով: Ունենք մի քանի տեսաձայնագրություններ:

Եղավ հարցադրում ազգային ժողովի պատգամավոր Սերգեյ Բագրատյանին, հանդես գալ ազգային ժողովում նախաձեռնությամբ, փոփոխել ընդերքի մասին օրենքը, Հայաստանի Հանապետություն ցանկացած մետաղական հանքարդյունաբերության բաժնետոմսերի 75 տոկոսը պետք է հանդիսանա Հայաստանի Հանրապետության բացառիկ սեփականությունը, ինչպես հարևան պետություններում, այդ պայմաններում մեր հայրենիքը կհզորանա և ժողովուրդը կապրի բարեկեցիկ, եթե կիրառվեն ժամանակակից անվնաս քանքարդյունաբերության տեխնոլոգիաներ:

Ելույթ ունեցավ «ՄԵՏԱ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի տնօրեն Արամ Օսիկյանը, ով 2010թ. ներկայանալով <<Վայք Մետալ>>,<<Վայք Ռեսուրս>>,<< Մետալ Գոլդ>>,<< Մետա Գոլդ>> Ընկերությունների տնօրեն կամ մասնագետ, հանդիսանալով նախաձեռնող դիմում է համայնքին ձեռք բերելու Գլաձորի բազմամետաղային հանքավայրի ուսումնասիրության, արդյունահանման թույլատվություն: Շրջակա միջավայրի նախարարության կողմից երկու անգամ ստացել է ՇՄԱԳ բացասական եզրակացություն, որի հիմքում շրջակա միջավայրի ջրային ռեսուրսների աղտոտման և վայրի կենդանիների ծնատեղիի պատճառով և մեզ համար անհասկանալի է դեռևս քանի անգամ պետք է գա Վայոց ձոր չհարգելով իրեն, և մեզ, որովհետև ունի Գլաձորի ավագանու երկու որոշում հանքարդյունաբերությունը մերժելու վերաբերյալ, մեկ ավագանու որոշում տարածքը էկո տնտեսական տարածք դարձնելու և Եղեգնաձորի խոշորացված համայնքից ստացված հանրային լսման բացասական եզրակացություն:

Նախաձեռնող խումբը նախորոք էլեկտրոնային տարբերակով ներկայացրել էր համայնքապետարան Գլաձորի բազմամետաղային հանքավայրի ուսումնասիրության և արդյունահանման դեպքում Վայոց ձորի տարածաշրջանի և Սևանա լճի սպասվելիք վնասները և ռիսկերը:

Հետևյալն են

. Տարածքների կայուն և հարատև թունավորում, որի հետևանքով դառնալու են օգտագործման համար ոչ պիտանի, այսինքն տարածքների առմիշտ կորուստ

. Հազարավոր տարիներ թափոնների՝ դատարկ ապարների և պոչանցքի կառավարում, որը մեծ գումարներ է պահանջում

. Ջրի ծավալների նվազում, ջրային համակարգի թունավորում, վտանգվելու է Արփա, Եղեգիս գետերի և Սևանա լճի մաքրությունը

. Տեղանքի երկրաբանական կառուցվածքի ձևափոխում, խաթարում

.Բուսականության կորուստ

. Վայրի կենդանիների կորուստ

. Բնակչության ապրելու միջավայրի որակի անկում .Երկրագործության, խաղողագործության, գինեգործության և անասնապահության արտադրանքի նվազում և որակի անկում

. Բնակչության եկամուտների նվազում, սոցիալական իրավիճակի նվազում, արտագաղթ, բնակավայրերի ամայացում

.Տարերային աղետներից, դիվերսյաներից, շարունակվող պատերազմական գործողություններից, հանքարդյունաբերողների սիստեմատիկ պայթեցումներից պոչամբարները, Հերհերի, Կեչուտի ջրամբարները, Արփա–Սևան թունելը ապահովագրված չեն, կվտանգվեն մարզի ամբողջ ջրային ռեսուրսները, տնտեսությունը, հարակից տարածաշրջանները, Սևանա լիճը և հարևան պետությունները կունենան երկարաժամկետ գլոբալ աղետ, որը կարելի է անվանել հանքագենոցիդ:

Գլաձորի բազմամետաղային հանքավայրի պաշարները հաստատվել են ԷԲՊՆ-ի, ՕՀՊԳ կողմից 11.11.2010թ.-ի N 276 որոշմամբ C1+C2 կարգերով հետևյալ քանակությամբ

Հանքաքար		Մետաղի պաշար	Պարունակություն
14474 հազ.տ	Կապար	Pb 628.37 հազ.տ	Pb 4.34%
	Ցինկ	Zn 711.44 հազ.տ	Zn 4.92%
	Պղինձ	Cu 63.4 հազ.տ	Cu 0.44%
	Կադմիում	Cd 2605.3 տ	Cd 0.018%
	Արծաթ	Ag 201.18տ	Ag 13.90գր/տ
	Ոսկի	Au 9789.0 կգ	Au 0.68գր/տ
	Ծծումբ	S 53 հազ.տ	

Ունենալով նախկին ուսումնասիրության հաստատված պաշարները, նոր ուսումնասիրության անհրաժեշտություն չենք տեսնում:

Խորհրդային միության տարիներին կառավարությունը գիտեր թե Գլաձորի հանքավայրում մետաղների տեսակների և քանակության վերաբերյալ և ինչպիսի ազդեցություն կունենա շրջակա միջավայրի վրա, հաշվի առնելով ժողովրդի, պետության շահը կանխատեսվելիք վնասները մարդկության և շրջակա միջավայրի վրա, անդառնալի կորուստների ծավալների մեծությունը, այն չի շահագործվել: Շահագործման դեպքում նախկին Եղեգնաձորի և Վայքի շրջանների բնակիչները ամբողջությամբ պետք է տեղափոխվեին այլ տարածաշրջան, կարող ենք ներկայացնել 1960-1980թթ Եղեգնաձորի շրջանի ղեկավարների, բնակիչների, մասնագետների, երկրաբանների մի քանի տեսաձայնագրություններ:

Վայոց ձորը ամբողջությամբ գտնվում է Վեղի-Վայք ուրանային հանքաշերտի վրա, ցանկացած մետաղական հանքարդյունաբերություն ուղորդվում է ռադիոակտիվության ֆոնի ակտիվացմամբ, քանի որ հանքավայրերը հարուստ են կապարով, իսկ բնության մեջ կապարը առաջանում է ուրանի և թալիումի

իզոտոպներից, Վայոց ձոր մարզի լեռնաշղթաները երիտասարդ են, այդ պրոցեսը կարող է շարունակվել միլիոնավոր տարիներ:

Այսօր ինքնիշխան պետության պայմաններում, հանքարդյունաբերության ոլորտում պետության և ժողովրդի շահերը երկրորդականացված, նույնիսկ անտեսված է, այդ քաղաքականությունը նպաստում է ժողովրդի ունեցվածքը նվիրել մի քանի անհատների, ուսումնասիրությունը ցույց է տալիս հետագայում այդ ընկերությունները բաժնետոմսերը վաճառում են արտասահմանյան ընկերությունների, որտեղ մշտապես նկատվում է թուրքական հետք:

Հայաստանի Հանրապետության հզորացման համար պահանջում ենք փոխել ընդերքի մասին օրենքը, ցանկացած մետաղական հանքարդյունաբերության հսկիչ փաթեթը մինչև 75տոկոսը պետք է լինի պետության բացառիկ սեփականություն, որովհետև համաձայն ՀՀ սահմանադրության Հոդված 10. Սեփականության երաշխավորումը 2.Ընդերքը և ջրային ռեսուրսները պետության բացառիկ սեփականությունն են:

Նման մոտեցում կա մեր հարևան բոլոր պետություններում:

<<ՄԵՏԱ ԳՈԼԴ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հանքավայրի համառոտ նկարագիրը և իրադրության սխեման թերի է, ոչ լիարժեք, չի ուսումնասիրել և չի ներառվել այն բոլոր ռիսկերը որոնք կառաջանան ուսումնասիրության և արդյունահանման դեպքում, չի կատարվել ՇՄԱԳ օրենքի հոդված 28-ի 5 մասի պահանջները:

. Համաձայն օրենքի պետք է նկարագրվեր ուսումնասիրությունից արդյունահանում արտադրական համառոտ սխեման, որը բացակայում է

. Չի ներկայացրել այն ռիսկերը կապված ուսումնասիրվող հանքավայրի և ուրանային հանքաշերտերի ու կապարի մեծ քանակության հետ, որովհետև կապարը ստացվում է ուրանի և թալիումի իզոտոպներից, նման մետաղական հանքարդյունաբերությունը ուղեկցվում է ուրանային ճառագայթման ֆոնի ավելացմամբ:

. Հանքավայրը գտվելով բնության հատուկ պահպանվող տարածքում՝ Եղեգնաձորի արգելավայր՝ որը ստեղծվել է 1971թ. 4200հա տարածքով, կանխատեսելի ռիսկերը կենդանական և բուսական աշխարհի վրա, և կառավարության կողմից ներկայացվել է առաջարկություն արգելավայրի տարածքը ընդլայնելու վերաբերյալ

. Բացակայում է ստորգետնյա ջրային քարտեզը և հնարավոր ծանր մետաղներով հարստացված ստորգետնյա ջրերի Արփա-Սևան ջրատար , Եղեգիսի կիրճ և Սևանա լիճ թափանցելու ռիսկերը

.Ուսումնասիրվող հանքավայրի հարևանությամբ 3500 հա. սեփականաշնորհված խոտհարքների, արոտավայրերի հետագա ճակատագիրը

Մենք գտնում ենք <<ՄԵՏԱ ԳՈԼԴ>> ՍՊԸ-ի ներկայացրած հանքավայրի նախագծով կատարվող ուսումնասիրությունները այսօրվա գործող

տեխնոլոգիաներով հանքարդյունաբերությունը անհամատեղելի է մեր ապրելակերպին:

Հանրային լսման ժամանակ երբ սկսվեց մտքերի փոխանակությունը և ելույթները համայնքի մի խումբ բնակիչներ ովքեր կողմ էին հանքարդյունաբերությանը, ինչպես նախորդ տարիներին, նույն մարդիկ սկսեցին խանգարել հանքարդյունաբերությանը դեմ ելույթներին, թույլ չտվեցին մտքերի փոխանակությանը և հնարավորություն չընձեռնվեց մասնակիցներին ստանալ իրեն հարցերի պատասխանը և ելույթ ունենալ:

Համայնքապետարանի կողմից կազմվել էր մասնակիցների օրինակելի ձևաթուղթ՝ ցուցակ, որտեղ լրացվում էր մասնակցի ստորագրություն և հետադարձ կապ:

Արամ Օսիկյանը նախաձեռնեց կողմ, դեմ, ձեռնպահ մասնակիցների ստորագրահավաք, որտեղ բացակայում էր հետադարձ կապը, կամ ստորագրողի անձնական տվյալներ, ստորագրահավաքի ամբողջ ընթացքում Արամ Օսիկյանը կանգնեց ստորագրվող սեղանի կողքին, ուղղորդելով ստորագրողներին, հանրային լսումը խանգարող խումբը արգելափակել էր ստորագրվող տարածքը այնպես, որ մասնակիցները հնարավորություն չունենան իրենց կամքը արտահայտելու, դահլիճում առկա էր մոտավորապես 400 մասնակից, նրանք ստորագրեցին այնքան ինչքան ցանկացան և հանքավայրին կողմ մասնակիցները ստորագրել են ձեռնպահի սյունակի մեջ, նշված փաստաթղթից հնարավոր չէ վերլուծել մասնակիցների կարծիքը, առկա են անընթեռնելի, կրկնվող ձեռագրերով ստորագրություններ, առաջարկում ենք փաստաթուղթը ամբողջությամբ ճանաչել ոչ իրավաչափ:

Ելույթների ժամանակ մասնակիցները ներկայացրեցին հանքավայրին դեմ նախորոք կատարված պատշաճ 1100 ստորագրահավաք, որը հանձնվեց հանրային լսման պատասխանատու Սամվել Այվազյանին /հիմք տեսաձայնագրություն/:

Մենք գտնում ենք որ հանրային լսումն անցել է օրենքի կոպիտ խախտումներով, որի համար տալիս ենք բացասական եզրակացություն և խնդրում ենք Եղեգնաձորի խոշորացված համայնքի ավագանուն ուսումնասիրել վերը նշված փաստերը, տալ հանրային լսմանը բացասական գնահատական, արգելել Գլաձորի բազմամետաղային հանքավայրի ուսումնասիրությունը և արդյունահանումը, հիմք ընդունելով նախկինում կայացված ավագանիների որոշումները և կատարված հանրագիր ստորագրության արդյունքները, որին մասնակցել են 2248 քաղաքացի, 91 տոկոսը դեմ է արտահայտվել հանքարդյունաբերությանը, նախաձեռնությունը չուղարկել ՇՄԱԳ փորձաքննության:

Կանխավ շնորհակալություն

Գլաձորի բազմամետաղային հանքավայրի ուսումնասիրությանը, շահագործմանը դեմ նախաձեռնող խմբի

ղեկավար _____ Հարություն Գևորգյան հեռ.բջջ.094678570

օգնական _____ Հայկ Իսախանյան հեռ. բջջ.091201349

<<14>> հուլիս 2025թ.